

ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԴ ԱՐԱՐԱԾԸ ՏԱՃԱՐ ՀՈԳՎՈ (ՔԱՐՈԶ)

«...ի սկզբանէ՝ արու և էգ արար զնոսա եւ ասէ. Վասն այսորիկ թողցէ այր զհայր եւ զմայր՝ եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ի մարմին մի: ...արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»:
(ՄԱՏԹ. ԺԹ 4—6)

Այս խոսքերը, սիրելի ժողովուրդ, վերցված են քիչ առաջ Սուրբ Գրական ընթերցումների ժամանակ կարդացված Մատթեոսի Ավետարանից: Մատթեոսի Ավետարանի այս հատվածը մեկ պատմում է Քրիստոսի կյանքից մի միջադեպ, որ կատարվեց Նրա քարոզչական գործունեության ընթացքին: Որքան Քրիստոս շրջում էր քաղաքից-քաղաք, որքան Քրիստոս շրջում էր գյուղից-գյուղ, այնքան ավելի բազմանում և շատանում էր Նրա հետևորդների և աշակերտների թիվը: Սակայն երբեմն պատահում էր այնպես, որ Քրիստոսին շրջապատում էին մարդիկ, որոնք ցանկանում էին Նրան նեղ վիճակի մեջ գցել, դժվարին հարցումներով ծուղակի մատնել: Բայց Քրիստոս Իր իմաստությամբ կարողանում էր պատասխան տալ այդպիսի անձանց: Եվ ահա, այսօրվա Ավետարանի մեջ, մի խումբ փարիսեցիներ շրջապատել էին Քրիստոսին և լսում էին նրա վարդապետությունը. հանկարծ Նրան հարց տվեցին, ասելով. «Վարդապետ, արդյոք արտոնվա՞ծ է մարդուն որևէ փոքր սխալի պատճառով իր կնոջը արձակել, բաժանվել իր կնոջից»: Քրիստոս մի պահ մտածում է, անմիջապես հասկանում նրանց միտքը և իր անձնական պատասխանը տալու փոխարեն, անմիջապես դիմում է Սուրբ Գրքին, մարգարեների խոսքերին՝ ասելով. «Չե՞ք հիշում արդյոք, որ գրված է, թե սկզբից Աստված ստեղծեց արուն և էգը, և նրանք երկուսը միասին պետք է թողնեն իրենց հորը և մորը և կազմեն մեկ ընտանիք, ընտանեկան մեկ միավոր և ինչ որ Աստված միացրեց, թող մարդ չբաժանի»: Անշուշտ այս պատասխանի մեջ ամենից առաջ Քրիստոս շեշտը դնում է Սուրբ Գրքի, Սուրբ Գրական ավանդությունների վրա: Ինչպես քիչ առաջ

ասացի, Իր անձնական պատասխանը տալուց Քրիստոս ավելի կարևորություն տվեց Սուրբ Գրական հատվածներին կամ ավանդություններին: Այս հատվածի մեջ երկրորդ գաղափարն այն է, որ Քրիստոս ասում է, թե պետք է թողնել հորը և մորը և գնալ կնոջ ետևից և լինել մեկ մարմին: Ինչպե՞ս մեկ մարմին պետք է լինել: Այսօրվա Սուրբ Գրական ընթերցման մեջ, կորնթացիներին ուղղված Պողոս առաքյալի թղթի մեջ, որը նույնպես հորդոր է այս հարցի կապակցությամբ, մարդ արարածը համարվում է տաճար հոգվո: Հոգվո տաճար, սիրելի ժողովուրդ, նշանակում է Աստծու բոլոր շնորհքների բնակարանը: Եվ մարդ արարածը պետք է այդ շնորհքները գեղեցիկ կերպով, իմաստուն կերպով օգտագործի իր հարկի տակ: Ահա ես այսպես եմ հասկանում այսօրվա ավետարանական ընթերցումը, և այս է ասված ավետարանական հատվածի մեջ:

Սիրելի ժողովուրդ, այսօրվա մեր առօրյա կյանքում կան ընտանիքներ, կան կույգեր, որոնք գտնվում են դժբախտությունների մեջ, և այսօրվա ավետարանն ուղղված է հենց այդպիսի ընտանիքներին: Ես ուզում եմ աղոթել, դուք էլ ինձ հետ աղոթեցեք միասին, որ Աստված օգնի այս ընտանիքներին, որպեսզի կարողանան այդ դժվարություններից դուրս գալ, որպեսզի կարողանան աստվածավայել մի կյանք վարել: Այս է իմ մաղթանքը, իմ աղոթքը և իմ ցանկությունը այսօրվա առթիվ: Այսօրվա ավետարանական հատվածի մեջ կա նաև Քրիստոսի խոսքը, երբ իր մոտ է հրավիրում մանուկներին: Այստեղ, ձեր առջև մոտ երեսուն երիտասարդներ են, որ Ֆրանսիայից են եկել: Նրանք լսել են Քրիստոսի այդ ձայնը, պատասխանում են իրենց ներկայությամբ այդ ձայնին և այսօր մեկ հետ աղոթում են: Նրանք եկել են ճանաչելու իրենց նախնիների արմատները, տեսնելու իրենց Նոր Հայրենիքը ծաղկումի և բարգավաճումի մեջ, հաղորդվելու հայ ստեղծարար ժողովրդի այսօրվա հևքին, որպեսզի զգան, որ իրենք մասն են Մայր Հայրենիքի, հայրենաբնակ ժողովրդի, որ ամենօրյա նվիրումով կերտում է իր պայծառ ապագան: Աղոթենք միասին, որպեսզի ինչ ուխտով, ինչ երդվանքով որ նրանք եկել են Մայր Հայրենիք, երդվանքները կատարվեն, և տուն վերադառնան մի քիչ ավելի հայացած, Մայր Հայրենիքով ուժեղացած:

Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի առատ շնորհները լինեն ձեզ՝ բոլորիդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն: